

զորական տաճարն է և գոմական ամենափառահեղ շենքերից մէկը՝ որ Ահերտեմբերդի ժողովուրդի մէջ առանձնապէս կենդանի է կրօնական եռանդը: և այն երկրներից մէկն է առ ուրաւելի մրցումն կայ կաթոլիկութեան զէմ՝ մեծապէս նոգաստում էր ժողովը բազմամարդ և բազմակողմանի դարձնելու, գրեթէ սովորականից ոգեւորութիւն յառաջ բերելու: Մայր տաճարում կատարուած հանդէսներին տասն հազարից աւելի աղօմողներ էին մասնակցում: — Ընկերութեան առենապարի տուած հաշուից երեսում էր որ վերջին տարին մի շաբթ նոր մասնածիւղեր են աւելացել: այնպէս որ նոցա թնդ հանուր թիւը 1862-ից 1875-ի է բարձրացել: կանանց ընկերութեանների թիւը բարձրացել է 549-ից 563-ի: Ընդհանուր եկամուտ ունեցել է ընկերութիւնը մտ մի միլիոն հարիւր յիսուն հազար բուրին՝ յիսուն հազարով աւելի քան նսիսըմաց տարին: ծախք աւելի քան վեց հարիւր յիսուն հազար բուրի: 48 մեծ և փոքր եկեղեցիների շինութիւնը վերջացել է և 28 նորերինը սկսուել: զորա հետ մէկ տեղ կառուցուել են մի շաբթ օրից եկեղեցական, գպրոցական և բարեգործական շենքեր: — Այսպէս, բազորականութեան պաշտպան Շուէդիոյ Գուստավ՝ լոգով թագավորի անուան ներբռյ բոլոր այն երկրներում ուր բոլորականներ են ապրում և շիման մէջ են կաթոլիկների հետ՝ մի ընդարձակ բազմաթիւղ զործ է կազմէերազան, որ ինչ քան և համեստ շափով, պաշտպան է կանգնում բոլորականութեան շահերին և յաճախ յաջողութեամբ ներբին կոիւ վարում կաթոլիկութեան զէմ:

«Աւետարանական միութիւնը»: որ նման նպատակ ունի: իւր 11-րդ ընդհանուր ժողովն ունեցաւ հոկտ. 3-6-ին Մազզերուրդ քաղաքում և կրկին առանձնապէս նոգաստու որ պայմանների մէջ՝ յաջող ընթացքով:

— Մասնաւոր ուշագրութեան արժանի է նաև ժամանակակից համար հոգարդի գումարումը սեսպտ. 13 14-ին, Պէտք է ինկատի ունենայ, որ վաղուց վէճ կայ բժիշկների և պաստորների մէջ, թէ արգեօք մարմնական բժշկութիւնը, թէ հօգևոր միիմարութիւնը զինաւոր տեղ պէտք է բանէ խելացնորների խնամատարութեան գործում: Խորհուրդի վերջին գումարումը պապուցեցի, որ վէճը վերանալու վերայ է և երկու կողմից այն համոզման են գալիս հետզհետէ, թէ հոգեսր և մարմնաւոր բժշկութիւնն հաւասարաշափ կարեւոր են այս տեղ, և բժիշկ ու քահանայ ձեռք ձեռքի տուած պիտ գործեն:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՒԴԻԿԱԿՈՍ

ՄԻ ՆՈՐ ԱՐՀԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ:

Խնջիկ յայտնի է, Վեհափառ Հայրապետի հրամանով և յատուկ հսկողութեամբ նորոգւում է, ո Հոփիփումէի տաճարը: Արտաքին նորոգութիւնը պատրաստ է, և սքանչելի որպաւորութիւն է, անում նայողի վերայ: Այժմ սկսուած է, ներքին վերանորոգութիւնը, որ մեզ համար միանգամայն անսպասելի նորութիւններ ես երեան բերեց: Մի քանի շաբաթ առաջ արգէն մի արձանագրութիւն էր բացուած, նորերս լսեցինք և երկրորդ արձանագրութիւնները պիտի առաջանաւ բացման մասին: Հ. Կարապետ վարդապետի հետ Հոփիփումէ գնացինք այդ արձանագրութիւնները գրի տանելու: որքան մեծ եղաւ մեր զարմանիքը և ուրախութիւնը երրուսանիք: որ արձանագրութիւններից մէկը կումիտաս կաթուղիկոսին է, ո Հոփիփումէի ներկայ աաճարի շինողին:

Կոմիտասի արձանագրութիւնը քանդակուած է մի առանձին քարի վերայ: որ հագցրած է աւագ սեղանի ետև արևելեան որմի մէջ՝ ներսի կողմից: 67 մատաշափ գուրս ընկած որմից, արևելեան լուսամուտի ծակատին: Արձանագրութիւնն անեղծ է, շատ քիչ տեղեր միայն ծեփք քակելիս վարպետների անզգուշութեամբ փոքրինչ մնասուած են, երկարութիւնը 35 սահման: իսկ լայնութիւնը 1 ½ մետր:

**ՔԱ ԱՃ ՅԻշեա զկոմիտաս
Հայոց կաթողիկոս շին
աւղ սրբոյ Հոփիփումէի**

Կոմիտասի անունով մի ուրիշ արձանագրութիւն յայտնի էր առաջ: Փիլիպպոս կաթուղիկոսի օրով շինուած փոքրիկ զանգակատունը այցելուների աշքից ծածկում է, այդ արձանագրութիւնը ինչպէս և նորա ստորեւ արևմտեան գրան վերեւ գտնուած լուսամուտի կամարի գեղեցիկ զարդերը, որոնք արձանի են առանձին ու շագրութեան: Բազմաշաստակ Յովհաննես եպիսկոպոս Շահիսամու-



նեան * զրի է առել այդ արձանագրութիւնը՝
որից և Ալիշան։ ** Բայց Շահնամեաննեան,
ինչպէս և Ալիշան, սխալ են ընդօրինակիլ։

Արձանագրութեան իսկական բառերն են՝

**Ես կոմիտաս եկեղեցապան սր
բոյ հռիփսիմեի կոչեցայ յա
թոռ սրբոյն զրիգորի շնեցի
զտաճար սրբոց վկայիցս քի**

Շահնամեաննեանն և Ալիշան սխալ ըն-
թերցու ածներ ունին. եկեղեցապան փոխա-
նակ եկեղեցապան, կարգեցայ փոխանակ կո-
չեցայ, և շնեցի փոխանակ շնեցի։ Կաշեցայ
բառի սխալ ընթերցու մը յառաջ է եկել այն
հանդամնքից, որ արձանագրութեան այդ
մասը կոտրուած է, բայց այնպէս պարզ նկա-
տելի է, ո վանկը և չ տառի ծայրը, որ ամե-
նայն հաստատութեամբ կարելի է ասել թէ
կոչեցայ պէտք է լինի և ոչ «կարգեցայ»։

Արձանագրութեան երկարութիւնն է 2:02
մետր իսկ լայնութիւնը 60 սանտ.

Երկու արձանագրութիւններն ես կհա-
նուին լուսանկարով, և կհրատարակուին «Ա-
րարատ»-ի էջերում։

Այս արձանագրութիւնները մեզ համար
կարեօր նշանակութիւն ունին ոչ միայն ի-
րենց բավանդակութեամբ, այլ և հնագրու-
թեան ահասկիւով։ Հին արձանագրութիւններ
ընդհանրապէս քիչ ունինք, իսկ հին ձեռա-
գիրներ՝ իրեն թու, գարից առաջ դրութիւն
ստուգուած, ամեննեին ոչ։ Տիկորի արձանա-
գրութիւնը, *** եթէ իրաւ Յոհան Մանդա-
կունու ժամանակի գործ է, ամենաշինն է, երե-
րիդ պէտք է համարուին նոմիտասի սյս եր-
կու արձանագրութիւնները, չհաշուելով տա-
պանաքարերի մանր մանր արձանագրութիւն-
ները, որոնք ստուգութեան կարօտ են (Համա-
չ. Տաշեանի «Ակնարկ մը հայ հնագիտութեան
վրայ», Վիեննա 1898, եր. 133—137)։ Ու-
րիշ կողմից ես այս արձանագրութիւնները

կարեօր նշանակութիւն ունին. նոցանից մէկը
արեկենան որմի վերայ է, իսկ միւսը արե-
մրական։ Այսպիսով մնեք զրական փաստեր
ես ունինք, թէ չռիփսիմեի տաճարը Հայոց
Շարտարապետութեան հնագոյն կոթողներից
մէկն է։

Բայցի Կոմիտասի նորագիւա արձանագր-
ութիւնից ինչպէս յիշեցինք մի երկրորդ ար-
ձանագրութիւն ես բացուած է, աւագ խորա-
նի ձախակողման որմի վերայ՝ աստիճաննե-
րից բարձր։

Ի թվիս ՁԽԵ.

Ի պատրուսթեան իշխանաց իշխանին
մեծին շահնշահի և աղբուղին ես շիրին
խաթունս ու պայտունս խաթունս ու թաւդ-
իւնս ու թալիս ու խոճիս ու զայիրս թողաք
զհռիփսիմուց զբարակին շարիտան եւ զշահ-
նաին բարակի հակն արդ ի մերոց կամ յաւ-
արաց ի մեծաց կամ ի փոքունց խափանել
ջանա Յժ՛ Հայրապետացն նվազած է, կայենի
եւ յուգայի մասնակից է եւ յիր հաւատեն
տպիզար է, յամէն յազգէ նալազ է եւ աւրհ-
նել հող զնոյ մի ծածկեացէ կատարիչքն
աւրհնեին յայ վարհամ գրիչ։ («Վարչ և Համ»
վանդերը բաժանուած են մի խաչքարով)։

Այս արձանագրութեան մէջ անհասկա-
նալի և գժուարընթեռնի բառեր կան. բայց
Ճիշդ ընթերցուածն ենք տալիս կարծեմ եր-
կից և երից չ. Կարապետի հետ վերստու-
գելուց յետոյ։

Դարեզին վարդ, Յովսէփին։



ՄԱՅԻ ԱԹՈՒԹ.

Ինչպէս որոշուած էր, կիւրակէ սկսա-
20-ին Նորին ս. Օծութիւն Վեհափառ։ Հայ-
րապետը վայելուշ հանգիտով եպիսկոպոս ձեռ-
նագրեց Բարձր. Ներսէս և Գորբիկէ ծ. Վարդա-
պետներին։ Հանգիտի միջացին կարգացուեցան
կ. Պոլսոյ Ամեն, Պատրիարքի կրկին վրու-
թիւնները, որոնցով յայնում էր, թէ չ.
Ներսէս ընարուած է Զմիւռնիոյ տեղական և
չ. Գորբիկէ կ. Պոլսոյ ընդհանուր կրօնական

* Սասպրուրին Կարուղիկ էքմիածնի և հինգ
գոտանցն Այրարատ, I. 1842 թ. եր. 264:

** Այրարատ եր. 238:

*** Այլշամի Շիրայ եր. 132: